ՄԱՆՈՒԿԻ ԻՋԵՒԱՆԱՏՈՒՆԸ ԲՈՒԽԱՐԵՍՏՈՒՄ (1804ից առաջ--ցայսօր)

ԱՆԴՐԷՅ ՊԱՍԼԱՐԻՈՒ
andrei_paslariu@yahoo.com

ԱՌԱՋԱԲԱՆ

Սոյն հաղորդումը ռումինական եւ այլ աղբիւրների ու պահպանուած գծանկարների ու լուսանկարների հիման վրայ ներկայացնում է Բուխարեստի ամենայայտնի շինութիւններից մէկի՝ Մանուկի[1] իջեւանատան անցած ճանապարհը, փորձ է կատարւում անել որոշ ճշգրտումներ:

Մանուկի իջեւանատունը (ռումիներէն՝ Hanul lui Manuc) գտնւում է Բուխարեստի կենտրոնում ու կառուցուել է 1804ից առաջ: Թերեւս ամենայայտնի իջեւանատունն է Ռումինիայում ու գործող ամենահին հիւրանոցը երկրի մայրաքաղաքում[2]: Նոյնիսկ եթէ երբեմն կոչուել է «Դակիա հիւրանոց»՝ համարուելով քաղաքի կարեւոր հիւրանոցներից մէկը, այսօր յայտնի է կրկին իր առաջին սեփականատիրոջ անունով:

Քանի որ քաղաքի պատկերը փոխւում է շարունակաբար, իջեւանատան շուրջը եղած բոլոր կառոյցները (բացառութեամբ մի եկեղեցու) աւելի նոր են ու շատ քիչ են յիշեցնում 19րդ դարի սկզբի կենտրոնի քաղաքաշինութեան կամ ճարտարապետութեան մասին: Փողոցները, շէնքերը, հրապարակները՝ բոլորը տարբեր են հիմա, ու պէտք է ջանք թափել՝ պատկերացնելու քաղաքի հին պատկերը: Դէպի հարաւ մի լայն հրապարակ կայ՝ Միութեան հրապարակը, բայց շէնքի գլխաւոր մուտքը հիւսիսային կողմում է:

---

[1] Մանուկ Բէյ.- Մանուկ Մարտիրոսի Միրզայեան, 1769–1817, ռումինահայ դիւանագէտ, առեւտրական գործիչ: 1802ին Վալաքիայի իշխանից ստացել է ազնուականի պատուանուն: 1807ին թուրք-դանուբեան զօրքի հրամանատար Մուստաֆա փաշան Մանուկ Բէյին է յանձնել բանակի մատակարարման, ռուսների հետ հաշտութեան բանակցութիւններ վարելու գործը: Գործուն մասնակցութիւն է ունեցել 1812ի ռուս-թուրքական հաշտութեան պայմանագրի կնքմանը: 1813ին Բուխարեստից անցել է Տրանսիլվանիա, ապա հաստատուել Քիշնեւում եւ դարձել ռուսահպատակ: 1814ին նրան շնորհուել է պետական խորհրդականի աստիճան: Մեծ ծառայութիւններ է մատուցել Ռուշչուկի եւ բալկանեան այլ քաղաքների տնտեսական զարգացմանը: 1817ին հիմնել է Բուխարեստի առաջին հայկական դպրոցը («Մանուկ Բէյ», *Հայկական Սովետական Հանրագիտարան, հտր. 7*, Երեւան, 1981, էջ 253):

[2] Իջեւանատան մակերեսը մօտ 2000 քառակուսի մետր է, իսկ չափերը մօտ 65 x 35 մետր:

Դէպի հիւսիս ուրիշ մի հրապարակ է եղել՝ երկու եկեղեցիներով, որոնցից միայն մէկն է պահպանուել՝ Հին բակի[3] եկեղեցին, որովհետեւ ամբողջ այս տարածքը ժամանակին պատկանել է Վալաքիայի ղեկավարներին[4]:



Մանուկ բէյի դիմանկարը (Էրմիտաժ թանգարան, Սանկտ Պետերբուրգ)

Գլխաւոր դարպասը գտնւում է հիւսիսային ճակատի կենտրոնում, կամարի տակ, մինչեւ հարաւային ճակատը պարզ է ու միատեսակ:

Հարց է առաջանում՝ ինչու՞ գլխաւոր մուտքը Միութեան հրապարակ տանող կողմում չէ: Բացատրութիւնը սա է՝ որովհետեւ երկու դար առաջ Դմբովիցա գետը, որ հոսում է Բուխարեստի միջով - այժմ՝ Միութեան

[3] Հին բակն այն վայրն է, որտեղից Վալաքիայի ղեկավարները կառավարել են երկիրը մինչեւ 18րդ դարը: Այն այրուել է 1718ին եւ լուրջ վնասներ է կրել 1738ի երկրաշարժի ժամանակ՝ դառնալով անօգտագործելի: Այն կոչւում է Հին բակ 1775-ից, երբ մօտ 1.5 կմ դէպի արեւմուտք կառուցուել է Նոր բակը: Նոր բակը ոչնչացել է 1812ի հրդեհից: Հին բակի համալիրից այսօր մնացել են միայն իշխանական պալատի աւերակները (պատերի միքանի բեկորներ) եւ 16րդ դարի «Աւետում» եկեղեցին:

[4] Վալաքիան տարածաշրջան է ժամանակակից Ռումինիայի հարաւում, Կարպատեան լեռների հիւսիսում եւ Դանուբի հարաւում: Այն անկախ պետութիւն էր 14րդ դարից, բայց Օսմանեան կայսրութեան վասալ դարձաւ 15րդ դարի սկզբին: 1859ին միաւորուեց Մոլդովայի հետ՝ կազմելով ռումինական պետութիւնը: Բուխարեստը՝ Ռումինիայի ներկայիս մայրաքաղաքը, գրեթէ 400 տարի շարունակաբար Վալաքիայի մայրաքաղաքն է եղել:

հրապարակի տակ - առաջ հոսում էր Մանուկ Բէյի իջեւանատան ետեւում: Շէնքի ու գետի միջեւ միայն մի նեղ մայթ կար, հաւանաբար՝ մէկ մետր լայնութեամբ: Ուրեմն՝ հարաւային ճակատը, փաստօրէն, շէնքի ետեւն էր:

Մանուկի շէնքն ունի մի լայն ներքին բակ, երկյարկանի է (բացառութեամբ նկուղի): Իր երկու յարկերն ունեն փայտէ ծածկապատշգամբներ՝ բոլորուած բակի շուրջը: Բոլոր շէնքերից միայն իջեւանատունը փայտէ տանիք ունի, լինելով ամենահինը, բայց 19րդ դարի լուսանկարներում կարող ենք տեսնել, որ այն ծածկուած էր խեցէ սալիկներով: Յայտնի չէ, թէ 19րդ դարի սկզբին այդպէ՞ս էր, թէ՞ տանիքի շինանիւթը փոխուել է աւելի ուշ, վերանորոգման ընթացքում:





Էռնստի յատակագիծը (1791) եւ... իջեւանատունն ու շրջակայքը ԺԹ. դարակէսին

ԻՋԵՒԱՆԱՏՈՒՆՆ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բուխարեստի երկու հին յատակագծերի վրայ (Պուրսէլ՝ 1789, Էռնստ՝ 1791[5]) կարող ենք տեսնել երկու շէնք այն տարածքում, որտեղ աւելի ուշ

[5] Բուխարեստի երկու հին յատակագծերը կազմել են աւստրիացի ռազմական ճարտարագէտեր Ֆրանց Պորսէլը (1789) եւ Ֆերդինանդ Էռնստը (1791): Պորսէլի յատակագծից տեղեկանում ենք, որ 18րդ դարի վերջին Բուխարեստում ութ մեծ իջեւանատուն է եղել՝ Շերբան Վոդայի (1683-86), Կոնստանտին Վոդայի (1690-1700), Սուրբ Գէորգ նոր եկեղեցու (1695-1702), Ստաւրոպոլէոսի (1722-24), Կոլցիայի (1746), Սուրբ Կատարինէ եկեղեցու (1775-82), Դիմիտրիէ Փափազօղլուի (1784) եւ Ֆիլարէտ-Կոլցէայի: Բացի դրանցից, գործում էին նաեւ այլ, աւելի փոքր, իջեւանատներ: Նշուած հիւրանոցներից ոչ մէկը չի պահպանուել: Այն իջեւանատունը, որը կրելու էր հայ Մանուկ բէյ Միրզայեանի անունը, դեռ չէր կա-

կառուցուեց Մանուկ Բէյի իջեւանատունը: Երկուսն էլ ուղղանկիւն յատակագիծ ունեն: Մէկը երկար է, իսկ միւսն աւելի մօտ է հրապարակին: Այս շէնքերը հաւասար գծով շարուած են այսօրուայ Ֆրանսական փողոցի վերայ ու գտնւում էին Հին բակի լայն տարածքում:

1798ին Հին Բակի հողատարածքի մի հատուած վաճառուեց[6], միքանի տարածք էլ վաճառուեց շէնքերով հանդերձ: Գնորդների շարքում կար մի հայ՝ Մանուկ Միրզայեան անունով[8]: Հինգ տարի անց, 1803ին, Մանուկի իջեւանատան կառուցումն արդէն սկսուեց[9]:

Թէեւ պատմաբանների մեծամասնութիւնը, որոնք իջեւանատան անցեալն ուսումնասիրել են մինչեւ 20րդ դարի կէսը, գտնում են, որ շէնքի կառուցումը «*սկսուել է 1806ի երկրորդ կէսին*»[10] ու աւարտուել «*Սելիմ Գ.ի անկումից յետոյ, մօտ 1808ին*»[11], հնագիտական ապացոյցները[12], իջեւանատան հիւսիսային կողմում գտնուած հին ճարտարապետական բեկորներն[13] ու աւելի ուշ յայտնաբերուած միքանի պատմական փաստաթղթեր[14] ցոյց են տալիս, որ շէնքի կառուցումը սկսուել է աւելի առաջ, որովհետեւ, ինչպէս վկայել է ժամանակակից Եռան սին Դոբրէն[15], 1804 Օգոստոսի 23ի մեծ հրդեհի ընթացքում, երբ այրուել է Դմբովիցայի երկու կամուրջ,

---

ռուցուել: Ներկայումս Բուխարեստում քիչ շէնքեր կան, որոնք աւելի հին են քան Մանուկ բէյի իջեւանատունը: Հին շէնքերի մեծ մասը եկեղեցիներ են:

[6] George Potra, *Hanurile bucureştene*, Tiparul Românesc, Bucureşti, 1943, էջ 32. նաեւ՝ Panait I. Panait, "Hanul Manuc - Cercetări arheologice", *Buletinul Monumentelor Istorice*, LI(2):1972, էջ 3:

[7] Մանուկ բէյը 19րդ դարի սկզբին Բուխարեստում միակ հայը չէր: Բուխարեստի հայ համայնքի տարիքն անյայտ է: Բուխարեստի հայերի մասին առաջին փաստաթուղթը 1593 Նոյեմբերի 13ից է: Առաջին հայկական եկեղեցին կառուցուել է 1638ին: Այն վերակառուցուել է չորս անգամ՝ 1685, 1742, 1781 եւ 1911-15ին: Ներկայիս եկեղեցին, որը կառուցուել է հիների տեղում, բացուել է 1915ի Սեպտեմբերի 6ին:

[8] Ştefan Ionescu, *Manuc Bei, zaraf şi diplomat la începutul secolului al XIX-lea*, Ed. Dacia, Cluj-Napoca, 1976, էջ 32:

[9] Նոյն, էջ 32:

[10] George Potra, *Hanurile*, էջ 155:

[11] G. I. Ionescu-Gion, *Istoria Bucurescilor*, Stabilimentul Grafic Socecu, Bucureşti, 1899, էջ 493-94:

[12] Panait, էջ 3-11:

[13] Constantin Joja, "Hanul Manuc - Cercetări arhitectonice", *Buletinul Monumentelor Istorice*, an XLI(2):1972, էջ 11-6:

[14] Ilie Corfus, "Cronica meşteşugarului Ioan Dobrescu (1802-1830)", *Studii şi Articole de Istorie*, VIII:1966, Bucureşti, էջ 321:

[15] Յովհաննէս, Դոբրէի որդին, մուշտակագործ, արհեստագործ էր: Նրանից մնացել են քաղաքի որոշ շէնքերի միքանի նշումներ եւ գծագրեր:

այրուել է նաեւ Մանուկի շէնքը ու «*...դեռ մի ուրիշ կամուրջ, որը գտնւում էր Մանուկի իջեւանատնից աջ, գետի վրայ...*»[16]:

Այսօր նաեւ գիտենք որ նոյն 1804ին, Մանուկը միքանի հողատարածքներ է գնել ոմն Մըրգըրիտից եւ Անտոն Հիոյի այրիից: Այս հողատարածքները գտնւում էին հին բանտի դիմաց, եւ այնտեղ կար երկու շէնք՝ «*երկու խանութ, յետագայում ներառուած իջեւանատան շէնքի մէջ*»[17]: Ուրեմն գիտենք հիմա, որ Մանուկն այս շէնքերը չքանդեց, բայց ներառեց իր իջեւանատան կառոյցի մէջ:

Իջեւանատունը նորոգուեց 1804ի հրդեհից յետոյ[18]. նորոգումն աւարտուեց 1808ին[19]: Չորս տարի անց, Օսմանեան կայսրութեան եւ Ռուսական կայսրութեան միջեւ յայտնի 1812ի Բուխարեստի հաշտութեան պայմանագիրը կնքուեց այս շէնքում:

Այստեղից նոր փուլ է սկսւում շէնքի պատմութեան մեջ:

ՄԱՆՈՒԿԻ ՄԱՀԸ ՈՒ ԻՋԵՒԱՆԱՏԱՆ ՅԱՋՈՐԴ ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐԵՐԸ

Մանուկ Բէյը գրել է իր կտակը 1815ին[20] ու յաջորդ տարի խնդրել է իր կնոջ եղբօր՝ Ասուատուր Աւետեանին, իջեւանատունը վաճառել: Մանուկն ընդամէնը 48 տարեկան էր ու թերեւս՝ բաւական հիւանդ, ուստիեւ գիտակցում էր որ կարող է մեռնել ամէն պահի: Այս մանրամասը ցոյց է տալիս, որ նրա մահից յետոյ շրջանառուող բոլոր պատմութիւնները՝ թէ իբր Ռուսաստանում անհաւատարիմ մի ծառայ թունաւորել է նրան, ընդամէնը ստեր էին:

Մանուկը մահացել է 1817ի Յունիսի 20ին, Հնչեշտում[21]: Նրա մահից յետոյ շէնքը մնացել է իր ընտանիքին, որն ապրում էր Հնչեշտում ու չէր կարող պահպանել Մանուկի շէնքերը Բուխարեստում: Ուստի, 1825ին շէնքը վարձակալել է Դիմիտրիէ Իկոնոմիդիս անունով մի յոյն (նրա անունը երբեմն գրուել է Դումիտրակէ Էկոնոմու[22]), իսկ մօտ 1842ին Մանուկ Բէյի

---

[16] Նոյն. նաեւ՝ Panait, էջ 3. նաեւ՝ Ionescu, *Manuc Bei,* էջ 33:

[17] Ioan N. Dărvărescu, "Noi contribuţii la cunoaşterea trecutului fostei biserici domneşti Curtea Veche... ", *Glasul bisericii*, XXVII(1-2):1968, էջ 138-147. նաեւ՝ Ionescu, *Manuc Bei,* էջ 33. նաեւ՝ Panait, էջ 3:

[18] Ionescu, *Manuc Bei,* էջ 33

[19] George Potra, *Istoricul hanurilor bucureştene*, ed. Ştiinţifică şi Enciclopedică, Bucureşti, 1985, էջ 166:

[20] Gheorghe Bezviconi, *Manuc Bei*, Tipografia Uniunii Clericilor Ortodocşi, Chişinău, 1938 (ediţia a II-a), էջ 20:

[21] Հնչեշտն այսօր Մոլդովայի Հանրապետութեան քաղաք է: 1812ին հենց Մանուկի իջեւանատանը, Բուխարեստում ստորագրուած պայմանագրով Մոլդովայի արեւելեան հատուածը միացուեց Ռուսական կայսրութեան: Մանուկն իր Հնչեշի հողը գնեց 1816ին բոյար Իոնիցը Իմանդիից: Տունը, որտեղ նա ապրել է միայն մէկ տարի՝ մինչեւ իր մահը 1817, նախկինում Իմանդիի տունն է եղել:

[22] Potra, *Hanurile bucureştene*, էջ 34:

որդի Եոան (Յովհաննէս) Մանուկը շէնքը վաճառել է Դիմիտրիէ Իկոնոմիդիսին, Գէորգէ Իկոնոմիդիսին ու Վասիլեսկուին[23]:

Ամբողջ այս ժամանակաշրջանը լի է դատավարութիւններով այդ երեք սեփականատէրերի միջեւ, ու շէնքն իվերջոյ բաժին է հասել Լամբրու Վասիլեսկուին[24]:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Չնայած որ Մանուկ Բէյի կառոյցը գտնուում էր մայրաքաղաքի կենտրոնում ու համարւում էր կարեւոր իջեւանատուն, այն առաւելապէս յայտնի էր որպէս ոչ-մաքուր ու աղմկոտ մի օթեւան:

1831ի վերջին, հունգարացի նկարիչ Միկլոշ Բարաբաշը (1810–98) ժամանել է Բուխարեստ եւ ցանկացել է մնալ Մանուկի իջեւանատանը: Իր յուշագրութեան մէջ[25] նա գրել է. «*Անցնելով լեռների վրայով՝ հասայ Բուխարեստ առանց դժուարութեան, որտեղ գնացի Մանուկի իջեւանատունը, որն այնքան վատ վիճակում էր գտնւում, որ չհամարձակուեցի սենեակ վերցնել*»[26]:

Նման կարգի յիշատակութիւններ են թողել նաեւ անգլիացի Բենջմին Բարքլրը (1834ին)[27], շոթլանդացի հոգեւորականներ Էնդրիւ Բոնարն ու Ռոբըրտ Մքչէյնը (1839ին)[28], որոնք գնում էին Արեւելք՝ հրեաներին քրիստոնեայ դարձնելու, եւ շատ ուրիշներ:

1838Ի ԵՐԿՐԱՇԱՐԺՆ ՈՒ ՆՈՐՈԳՈՒՄԸ

1838ի երկրաշարժի ընթացքում, լուրջ ճաքեր յայտնուեցին իջեւանատան Դմբովիցայի կողմի պատերի վրայ[29]:

Երկար քննարկումներից ու բանավէճերից յետոյ հանրային իշխանութիւնները եւ տեղի ճարտարապետերը որոշեցին, որ Դմբովիցայի կողմի բոլոր պատերը պէտք է վերականգնուեն[30]: Հնագիտական հետազօտութիւնները (1967) ապացուցել են հին պատի հիմքը, եւ որ Դմբովիցայի կող-

---

[23] Academia Română, ms. 2542, f. 98 şi 112 apud George Potra, *Istoricul hanurilor bucureştene*, էջ 158:

[24] Potra, *Istoricul hanurilor bucureştene*, էջ 160:

[25] Ladislau Kóvacs de Kézdi, *Barabás Miklós emlékiratai*, Budapest, 1902:

[26] *Călători străini despre ţările române în secolul al XIX-lea*, Ed. Academiei Române, Bucureşti, 2006, vol. III, էջ 55:

[27] Նոյն, էջ 204. նաեւ՝ E. D. Tappe, "A Bible Society Agent in the Rumanian Principalities," *Slavonic and East European Review*, XLII(99):1964, էջ 388-402:

[28] Andrew Bonar & Robert McCheyne, *Narrative of a Mission of Inquiry to the Jews from the Church of Scotland in 1839*, William Whyte et Co., Edenborough, 1843:

[29] Arhivele Statului Bucureşti. Municipiul Bucureşti. Dosar 596/1838, f. 30 apud Potra, *Istoricul hanurilor bucureştene*, էջ 157-158:

[30] Նոյն:

մի արտաքին պատը վերականգնուել է նոր քարէ հիմքերով[31], 50-65 սանտիմետր դէպի հիւսիս[32]:



Միշէլ Բուկէի գծանկարները (George Oprescu, *Ţările Române văzute de artişti francezi*, Bucureşti, 1926)



1841Ի ԵՒ 1860Ի ԳԾԱՆԿԱՐՆԵՐԸ

Ֆրանսացի նկարիչ Միշէլ Բուկէն երկու գծանկար է կատարել 1841ին, իջեւանատան բակում, որոնք երկու տարի անց փայտափորագրութեան

[31] Panait, էջ 10:
[32] Նոյն:

տեսքով տպագրուել են Փարիզում[33]: Այս նկարներն ամենահին փաստաթղթերն են, որոնցից կարող ենք հասկանալ շէնքի ու յատկապէս բակի հին ձեւը: Դրանք շատ կարեւոր են եղել քսաներորդ դարում շէնքի վերականգնման համար:

Լիւդուիգ Անգերէրի լուսանկարը (*Buletinul Comisiunii Monumentelor Istorice*, anul XX, 1927, էջ 60) եւ ...Օգիւստ Լանսելոտի գծանկարը (George Oprescu, *Ţările Române văzute de artişti francezi*, Bucureşti, 1926)



[33] Constantin C. Giurescu, *Istoria Bucureştilor din cele mai vechi timpuri până în zilele noastre*, Ed. pentru Literatură, Bucureşti, 1966, էջ 313. նաեւ՝ Horia Teodoru, "Bucureştii vechi. Hanul Manuc, după o fotografie din anul 1856", *Buletinul Comisiunii Monumentelor Istorice*, XX:1927, էջ 60:

1856ին շէնքի սեփականատէրերը միքանի փոքր վերանորոգում են կատարել[34]: Նոյն տարուց առկայ է մի ուշագրաւ լուսանկար (հեղինակ՝ Լիւդուիգ Անգերէր)[35], որտեղ տեսնում ենք շէնքի բակը՝ կառքերով հանդերձ: Ճարտարապետական բոլոր մանրամասները կարելի է տեսնել այս լուսանկարում: Հասկանում ենք նաեւ, թէ որքա՛ն ճշգրիտ է Բուկէն պատկերել իջեւանատունն իր գծանկարներում: Անգամ նրա պատկերած տանիք տանող փայտէ սանդուղքը 16 տարի անց գտնուել է նոյն տեղում:

1860ին մէկ այլ ֆրանսացի նկարիչ՝ Օգիւստ Լանսելոտը, նկարել է իջեւանատան առօրեան: Նա բնութագրել է շէնքի հմայքը նաեւ բառերով. «*Խելագար այդ բակում կարող էիր տեսնել ողջ աշխարհի ամենազուարճալի ու ամենաբազմազան պատկերը՝ ճամբար, պահեստ, խանութ, սակարան, գազանանոց... բոլորը միասին այնտեղ էին*»[36]:

Եւ լուսանկարները հաստատում են նրա խօսքերը...

ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս նշուեց, իվերջոյ իջեւանատունը գնել է Լամբրու Վասիլեսկուն (1862ին)՝ մնալով դրա միակ սեփականատէրը ու մեծ փոխակերպութիւններով վերանորոգել է այն մինչեւ 1870՝ վերանուանելով «Դակիա հիւրանոց»[37]: Բակի կողմից կամարաշարքը փակուել է ապակիով[38] ու արեւելեան շէնքի կողմում կառուցուել է «Դակիա» սրահը 300 քառակուսի մետր տարածքով[39]:

Հիւրանոցի պաշտօնական բացումը տեղի է ունեցել 1874ին[40], երկու մեծ սրահով, որոնք օգտագործուել են միայն յատուկ միջոցառումների համար[41]: Այդ սրահներից մէկում 1878-79ին գործել է թատրոն[42]:

ՇԷՆՔԸ Ի. ԵՒ ԻԱ. ԴԱՐԵՐՈՒՄ

Քսաներորդ դարում շէնքը շարունակել է ձեւափոխուել: Հետաքրքրական է, որ այնտեղ առկայ են թէ՛ արեւմտեան, թէ՛ արեւելեան ճարտարա-

---

[34] Academia Română, ms. 1635, f. 333-334 apud George Potra, *Istoricul hanurilor bucureştene*, էջ 161:

[35] Teodoru, էջ 62:

[36] George Oprescu, *Ţările Române văzute de artişti francezi (secolele XVIII şi XIX)*, Bucureşti, 1926, էջ 60:

[37] Potra, *Istoricul hanurilor bucureştene*, էջ 163:

[38] Joja, էջ 11:

[39] Panait, էջ 11:

[40] *Le journal de Bucarest*, V (1874), nr. 407 (30 iul.), էջ 2. նաեւ՝ Potra, *Istoricul hanurilor bucureştene*, էջ 163:

[41] Potra, *Istoricul hanurilor bucureştene*, էջ 169:

[42] Նոյն:

պետական ազդեցութիւններ, թէեւ քսաներորդ դարի սկզբին ողջ Եւրոպայում մի կողմից նոր ոճ էր առկայ, միւս կողմից սկսում էին հասկանալ ճարտարապետական ժառանգութեան արժէքը եւ դրա պահպանութեան կարեւորութիւնը:

Իջեւանատան բակը հիւսիս-արեւմտեան անկիւնն ու մուտքը, 20րդ դարի սկզբին (*Buletinul Comisiunii Monumentelor Istorice*, anul XX, 1927, էջ 62) եւ...բակը գլխաւոր վերականգնումից յետոյ (*Buletinul Monumentelor Istorice*, anul XLI, 1972, nr. 2, էջ 12-13)

Մանուկ Բէյի իջեւանատունը 1950ին պետականացուել է[43]: Երեք տարի անց բակում կատարուել են առաջին հնագիտական պեղումները, որոնք,

[43] Նոյն:

սակայն, շատ արագ աւարտուել են[44]: Հնագիտական հետազօտութիւնը վերսկսուել է 1967ին[45]՝ նոր ու հետաքրքրական արդիւնքներով: Յայտնաբերուել են Հին Բակի պատերից երկուսը, որոնք անցնում էին իջեւանատան բակի միջով[46]:

Առաջին գիտական ու ամենամեծ վերականգնումը սկսուեց նոյն տարի ու աւարտուեց 1972ին: Բացումը կատարուել է 1971ի Յուլիսի 30ին[47]:

Եթէ ներսի բակի դէպքում վերականգնումը հիմնուել է Բուկէի գծանկարների ու հին լուսանկարների վրայ, ապա արտաքին ճակատների դէպքում, քիչ նիւթ է պահպանուել հին շէնքից: Այսպիսով, բոլոր խոյակներն ու միւս զարդաքանդակները ընդօրինակութիւններ են շէնքի հիւսիս-արեւմտեան անկիւնում գտնուողներից: Չնայած այս վերանորոգմանը, ընդամէնը միքանի տարուց շէնքը դարձեալ գտնուել է վատ վիճակում:

2007ին, երկարատեւ դատավարութիւնից յետոյ, ռումինական պետութիւնը շէնքը վերադարձրել է Կոնստանտին-Շերբան Կանտակուզինոյին, որն արագօրէն սկսել է շէնքի երկրորդ վերականգնումը[48]:

Երեք տարի անց, 2010ին Մանուկի իջեւանատունը նորից վերաբացուել է որպէս հիւրանոց[49]:

Այս երկու վերանորոգումներից յետոյ շէնքի ճարտարապետութիւնն այսօր աւելի մօտ է հին լուսանկարներին ու գծանկարներին, սակայն շէնքի առաջին պատկերը, յատկապէս արտաքին ճակատները, դեռեւս յայտնի չէ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մանուկի իջեւանատունը, որը կառուցուել է 1804ից առաջ եւ աւարտուել 1808ին, Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստի ամենածանօթ շէնքերից է: Այն ուշագրաւ ճարտարապետական նմուշ է, որ աչքի է ընկնում մեծ ներքին բակով: Իջեւանատունը եղել է 1812ին Օսմանեան կայսրութեան եւ Ռուսական կայսրութեան միջեւ կնքուած հաշտութեան պայմանագրի կնքման վայրը: Նրա առաջին սեփականատերը՝ Մանուկ բէյը (Էմանուէլ Միրզայեան, 1769-1817), հայ նշանաւոր վաճառական եւ դիւանագէտ էր:

Իջեւանատունը միքանի անգամ ենթարկուել է վերանորոգման, զգալի վերափոխումներ կրել 19րդ դարի վերջին, երբ վերանուանուել է «Դակիա հիւրանոց»: Վերջին վերանորոգումները տեղի են ունեցել 1967-72ին եւ 2007ից յետոյ: Ու թէեւ այս երկու վերանորոգումներից յետոյ շէնքի ճար-

---

[44] Panait, էջ 3:

[45] Նոյն:

[46] Նոյն, էջ 4:

[47] Նոյն, էջ 3:

[48] Տե՛ս՝ hanulluimanuc.ro :

[49] Տե՛ս՝ www.bucurestiivechisinoi.ro/2011/10/hanul-manuc-o-poveste-in-imagini :

տարապետութիւնն այսօր աւելի մօտ է հին լուսանկարներին ու գծանկարներին, սակայն շէնքի առաջին պատկերը, յատկապէս արտաքին ճակատները, դեռեւս յայտնի չէ:

Իջեւանատունն այսօր (աղբիւր՝ www.hanulluimanuc.ro)

MANUK'S INN IN BUCHAREST
(CIRCA 1804)
(SUMMARY)

ANDREI PASLARIU
andrei_paslariu@yahoo.com

The paper highlights the renowned inn of Manuk in Bucharest. Built after 1803 and completed by 1808, Manuk's inn is located at the centre of Bucharest, Romania. It is a remarkable architectural landmark, displaying a large inner courtyard. Its main entrance is on the north side. The inn was the site of a peace treaty between the Ottoman and the Russian Empires signed in 1812. Its first owner, Manuk Bey (Emanuel Mirzayan, 1766-1817), was a famous Armenian merchant and diplomat.

After Manuk Bey's death, the inn had various owners and was, at one point, known for being a dirty and noisy hotel.

The inn has undergone several renovations, including a significant transformation in the late 19th century, when it was renamed Hotel Dacia. More recent restorations took place in 1967–72 and after 2007. After these two renovations, the exterior of the building is now closer to the image we see in old photographs and drawings, but the original appearance of the building, especially the exterior façades, is still unknown.